

Այս նամակը գրելիս նստած եմ Քեմբրիջի համալսարանի կենտրոնական գրադարանում և խորությամբ ուսումնասիրում եմ Հարավային Աֆրիկայում վայրի կենդանիների հետ աշխատելիս լրացրածս նոթատետրի թեմաները: Շուրջս նստած ուսանողներն ու ես այստեղ ենք եկել աշխարհի տարբեր անկյուններից, բայց մեզ երկու բան է միավորել:

Առաջինը մեր ամենաանհնարին թվացող նպատակներին հասնելու ձգտումն է, և երկրորդը՝ հաջողության ճանապարհի մեկնարկային գծին կանգնելու՝ մեզ ընձեռված հնարավորությունը:

Այս հնարավորությունը ես ստացա 14 տարեկանում «Այբ» ավագ դպրոց ընդունվելու օրը: Դա իմ կյանքի ամենահպարտ օրերից էր, քանի որ բարդ ընդունելության գործընթացն անցել էի ամբողջովին ինքնուրույն: Ճնողներս ընդունելության միայն առաջին քննության օրն իմացան «Այբ» դիմելուս մասին, երբ պետք է ստորագրեին ընդունելության դիմումի լրացրածս հայտը: Մինչ այդ մի քանի շաբաթ շարունակ Մալաթիա թաղամասի իմ հին դպրոցից, երեք ավտոբուս փոխելով, հասնում էի ընդունելության քննություններին պատրաստող բաց դասերին, որովհետև գիտեի՝ միայն որակյալ կրթության միջոցով իմ առջև կբացվեին իմ ուրտում աշխարհի լավագույն մասնագետներից մեկը դառնալու ճանապարհի դռները:

Վախ չկա, քանի որ մեզ սովորեցրել են անընդմեջ սովորել՝ տարբեր առարկաներ, հմտություններ, տարբեր իրավիճակներում աճել և զարգանալ:



Ամեն տարի Հայաստանի ու Արցախի տարբեր քաղաքներից ու գյուղերից յուրօրինակ երիտասարդներ հայտնաբերում են «Այբ»-ը և ինձ պես ամեն գնով հաղթահարում ընդունելության գործընթացը՝ կրթությունն արժևորող համայնքի աջակցությամբ երեք տարի անելու հնարավորություն ստանալու համար:

«Այբ»-ի կրթաթոշակային ֆոնդը հնարավորություն է տալիս ցանկացած երեխայի, որն ընդունվել է ավագ դպրոց, անկախ ընտանիքի ֆինանսական վիճակից, ստանալու համաշխարհային մակարդակի մրցունակ կրթություն: «Այբ» ավագ դպրոցի աշակերտների ավելի քան 75%-ն ամեն տարի սովորում է ուսման վարձի փոխհատուցման՝ կրթաթոշակի շնորհիվ: «Այբարար» դառնալու և «Այբ»-ի գաղափարը շարունակելու համար միացե՛ք ամսական նվիրատվությունների համակարգին: Ձեր աջակցությունը կուղղվի «Այբ» ավագ դպրոցի կրթաթոշակային ֆոնդին:



Էմիլիա Սիմոնյան

«Այբ» ավագ դպրոցի շրջանավարտ

Անգլիայի Թեմբրիջի համալսարանի
կենդանաբուժության ֆակուլտետի
5-րդ կուրսի ուսանող



donate.ayb.am